# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հունվարի 2020թ. N ՄՌ/03-2020

ք. Արմավիր

### «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՆՈՒՆԵ ԱԹՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշմամբ հաստատված «Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 69-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 14-ի զեկուցագիրը և <<Էրեբունի>> բժշկական կենտրոնի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 14-ին տրված տեղեկանքը.

*ո ր ո շ ու մ   ե մ՝*

1. «Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ժամանակահատվածում լիազորությունների իրականացումը վերապահել նույն դպրոցի տնօրենի տեղակալ Նունե Աթոյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись

X

VERIFIED OCSP 15.01.2020 10:17:29 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ